

«Արցախբանկ» ՓԲԸ-ի կողմից ներգրավված ավանդների երաշխավորվածությունը և հատուցման ենթակա չափերը

Արցախբանկն ապահովում է ավանդատուների ավանդների վերադարձը:

Բանկի կողմից իրավաբանական անձանց ավանդների վերադարձն ապահովելու պայմանները սահմանվում են Ավանդի պայմանագրով: Ավանդի պայմանագիրը կնքելիս Բանկը ավանդատուին տրամադրում է ավանդների հատուցման երաշխավորման մասին ծանուցում:

Ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ավանդների հատուցումը երաշխավորվում է *Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի* կողմից: Երաշխավորված ավանդի չափերը սահմանվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերն են՝

- միայն դրամային ավանդի դեպքում՝ մինչև 10 (տասը) միլիոն ՀՀ դրամ,
- միայն արտարժութային ավանդի դեպքում՝ մինչև 5 (հինգ) միլիոն ՀՀ դրամ,
- և՛ դրամային (5 (հինգ) միլիոն ՀՀ դրամից ավել), և՛ արտարժութային ավանդների դեպքում՝ միայն դրամային ավանդը՝ մինչև 10 (տասը) միլիոն ՀՀ դրամ,
- և՛ դրամային (մինչև 5 (հինգ) միլիոն ՀՀ դրամ), և՛ արտարժութային ավանդների դեպքում՝ դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5 (հինգ) միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և բոլոր արտարժութային ավանդները՝ մեկ ավանդ:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է որպես յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի Ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն Ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ավանդատուի բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ավանդատուի ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Բանկում ավանդները չեն երաշխավորվում, եթե՝

- Ավանդատուն հանդիսանում է Բանկի ղեկավար և/կամ վերջինիս ընտանիքի անդամ
- Ավանդատուն հանդիսանում է Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և/կամ վերջինիս ընտանիքի անդամ
- Ավանդատուն, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր) հրաժարվել է ավանդի իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից
- Ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Ավանդատուն հակառակը չի ապացուցել
- Ավանդը Բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին Բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքը առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով
- Ավանդը ներդրված է Բանկի՝ ՀՀ տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում, ինչպես նաև ՀՀ տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում: